# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 136-Ա

## ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N06-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, հիմք ընդունելով աշխատակազմի քարտուղարի 2020 թվականի սեպտեմբերի 04-ի ,,Տիգրանուհի Սուքեյանին պաշտոնից ազատելու մասին,, N43-Ա որոշումը, հաշվի առնելով Տիգրանուհի Սուքեյանի կատարած աշխատանքը խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում, նրա գիտելիքներն ու կարողությունները նաև այն հանգամանքը, որ նա հանդիսանում է ,,Աստղաբնակ,, հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ և ընդառաջելով նրա խնդրանքին՝ /մտից մատյանի՝ 22.09.2020թ. թիվ 1339/ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 23-ի N06-Ա որոշման 1-ին կետում գրառված ,,Տիգրանուհի Սուքեյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,, բառերը փոխարինել ,,Տիգրանուհի Սուքեյան-,,Աստղաբնակ,, հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ,, բառերով և կետադրական նշաններով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ